1. Ես Մխիթար սպասաւոր ՀՐ Վրթա
2. Նիսի եառ։ ։ծ։ գահեկանի տունս
3. Եւ եառն ինձ Ա։ աւր ժամ ի
4. տարոջն։

Այդ դէպքում պէտք է կարծել, որ արձանագրութիւնը կատարուած է նորա եբիտասարդութեան ժամանակ, ԺԲ. դարի վերջին տասնամեակներում, երբ նա աշակերտ կամ սպասաւոր էր տէր Վրթանիսի մօտ և յետոյ արդէն վարդապետ դարձաւ ԺԳ. դարի առաջին քառորդին։

Հաւուց Թառի առաջին պարզ յիշատակութիւնն ունինք «Յովսէփու նորոգ վկայի» պատմութեան մէջ, որ նահատակուած է Դուին քաղաքում Հայոց Ո. Ժ. և Թ. (= 1170) թուին, «յամսեանն Ահեկի, որ աւր քսան էր», և որի մարմինը Սարգիս անունով մէկը, որդի Ջաւախի, բերում և թաղում է «յուխտն հոչակաւոր ի Հաւուց Թառ», «յաբևելից կողմանէ հանդէպ գիւղաքաղաքին Գառնու»։ Ժամանակակից Դաւիթ քահանան Մխիթար անունով մէկի խնդիրքով, որին Ալիշանը վանքի առաջնորդ կամ միաբան է կարծում, իսկ Գալուստ Տ. Մկրտչեան (Միաբան) նոյնացնում է Գոշ Մխիթարի հետ, գրել է նորա վկայաբանութիւնը, կցելով և մի սրտառուչ ներբող (1)։

ԺԳ. դարի սկզբին՝ 1205 թուին, յիշւում է «Եղիայ ի Հաւուց Թառոյ, այն որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից



Պատկեր 10

Արձանագրութիւններ բլրի եկեղեցու հիւսիսային պատին.

(1) Ձեռ. Էջմ. N 3777, 462բ։ Ձեռագիրը ծագմամբ, գրեթէ, ժամանակակից է դէպքին։ Վկայաբանութիւնը հրատարակել է Գալուստ Տ. Մկրտչեան, Արարատ. 1897. 42։ Քաղուածքներ ունի ներբողի հատուածներով Ալիշան. Այր. 356, 358։ Վարդան Պատմիչ յիշում է Յովսէփի նահատակութիւնը «յամսեան Ահեկի ի քսան», առանց ճիշդ տարեթիւը նշանակելու՝ 1168-1172 թ. թ. մէջ։ Քաղուածօրէն տե՛ս եւ Յայսմաւուրք. Մարգաց ԺԳ. եւ Յունիս ԺԹ։ Յովսէփի վկայի գերեզմանի մասին յիշում է եւ Մեծոփեցին (հրատ. Փարիզ. 61)։